ՀԱՂՈՐԴՈՒԹՅՈՒՆ

Յուրաքանչյուր քրիստոնյայի համար մեծ խորհուրդ ունի Սուրբ Հաղորդության ընդունումը: Դա այն խորհուրդն է, որով հավատացյալը հացի եւ գինու տեսքով ստանում է փոխակերպված Քրիստոսի մարմինն ու արյունը՝ մեղքերի թողության ու հավիտենական կյանքին հասնելու համար: Այն հավատացյալներին է տրվում Սուրբ Պատարագի արարողության ժամանակ:

Վերջին ընթրիքի ժամանակ Հիսուս Քրիստոս վերցրեց հացը, օրհնեց այն, մասնատեց ու տվեց իր աշակերտներին՝ ասելով. «Առէ՛ք, կերէ՛ք, այս է իմ մարմինը»: Եւ բաժակ վերցնելով՝ գոհութիւն յայտնեց, տուեց նրանց ու ասաց. «Խմեցեք դրանից բոլորդ, որովհետև այդ է նոր ուխտի իմ արյունը, որ թափվում է շատերի համար՝ իրենց մեղքերի թողության համար» (Մատթ. 26:26-28, Մարկ. 14.22, Ղուկ. 22.19): Իր աշակերտներին հաղորդություն տալով՝ մեր Տերը միևնույն ժամանակ նրանց պատվիրեց այս խորհուրդը միշտ կատարել:

Եկեղեցու յուրաքանչյուր անդամ, եթե կամենում է Սուրբ Հաղորդություն ստանալ, պետք է նախապատրաստվի, որի առաջին քայլը մեր մտահայումն ու ինքնամփոփումն է: Մեղքերից մաքրվելու համար անհրաժեշտ է հզոր կամք: Մենք պետք է խորհենք այն մեղքերի մասին, որ գործել ենք, սրտանց ապաշխարենք ու ներենք այն մարդկանց ում հետ լավ հարաբերությունների մեջ չենք: Հաղորդվողը Քրիստոսի մարմինն ու արյունն ընդունելիս չպետք է իր սրտի մեջ ատելություն կրի:

Հաջորդ քայլը պահքի միջոցով մեր մարմինն ու հոգին մաքրելն է: Սովորաբար ծոմ են պահում 6 ժամ կամ Սուրբ Հաղորդություն ստանալու նախորդ երեկոյից սկսած: Եթե առողջական խնդիրները թույլ չեն տալիս ծոմ պահել, քահանայի կողմից կարող է տրվել հատուկ թույլտվություն դեղորայք կամ թեթեւ կերակուր ընդունելու:

Վերջին քայլը մեր մեղքերը խոստովանելը եւ քահանայից մեղքերի թողություն ստանալն է, որը կատարվում է հավատացյալների կողմից իրենց մեղքերը խոստովանելու, խոստովանություն կարդալու միջոցով:

Այն ընթերցվում է բարձրաձայն՝ հոգեւորականի եւ հավատացյալի կողմից մինչ Սուրբ Պատարագը: Անձնական խոստովանությունը կարող է նաեւ արվել առանձին, քահանայի առջեւ: Խոստովանությունը լսելուց հետո քահանան մեղքերի թողություն է տալիս հանուն Հիսուս Քրիստոսի, որը հնչում է հետևյալ կերպ.

«Ողորմեսցի քեզ մարդասէրն Աստուած, եւ թողութիւն շնորհեսցէ ամենայն յանցանաց քոց, խոստովանացելոցն եւ մոռացելոցն: Եւ ես կարգաւս քահանայական իշխանութեան, եւ հրամանաւն աստուածային՝ թէ Զոր արձակիցէք յերկրի, եղիցի արձակեալ յերկինս. նովին բանիւն արձակեմ զքեզ յամենայն մասնակցութենէ մեղաց քոց, ի խորհրդոց, ի բանից եւ ի գործոց. յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն սրբոյ: Եւ դարձեալ տամ զքեզ ի խորհուրդս սուրբ եկեղեցւոյ, զի զոր ինչ գործիցես բարիս, եղիցի քեզ ի բարեգործութիւն եւ ի փառս հանդերձեալ կենացն. ամէն»: